այլ որպէս սովոր են ի բնէ թշնամանել զտեարս իւրեանց՝ ըստ նմին աւրինակի եւ այժմ կամին կատարել զչար կամաց իւրեանց զխնդիրս. քանզի միշտ իշխանափոխք լեալ են եւ տիրատեացք»: *8* Եւ թագաւորն Արեաց Վռամ հրաման տայր՝ միայն ընդ միայն կոչել առ ինքն զսուրբ կաթողիկոսն Հայոց զՍահակ. քանզի մեծարէր զնա, նախ՝ վասն ազգականութեան առնն, եւ դարձեալ՝ զի առաջի անհաւատիցն յարգոյ եւ պատուական ցուցանէր զսուրբ ծառայս իւր Աստուած. եւ հարցեալ զերանելի կաթողիկոսն՝ կամէր լսել ի նմանէ զամենայն բանիցն զչարախաւսացն թագաւորացն Հայոց: *9* Իսկ նորա պատասխանի արարեալ ասէր, եթէ «Ոչ գիտեմ, զի՛նչ խաւսին նոքա զնմանէ. նոքին իսկ[1] ասասցեն, եւ դուք լուարուք ի նոցանէ[2]. եւ որպէս ասենն առաջի ձեր՝ յանձինս իւրեանց ընդունին զհատուցումն. զիս ինչ այդպիսի[3] խնդիրս բանից մի՛ հարցանէք. զի ոչ ինչ լսելոց էք յինէն յաղագս չարախաւսութեանդ այդորիկ չար ինչ եւ կամ բարի»:

10 Ապա կոչէր առ ինքն թագաւորն Վռամ զՍուրէն պալհաւն, զիւր զհազարապետն, որ ազգակից եւ տոհմակից էր մեծի քահանայապետին Սահակայ, որպէս զի միաբանեալ եւ նա ընդ այլ նախարարսն Հայոց՝ վկայեսցէ չարախաւսութեան նոցա, եւ պատուեալ բազում պարգեւաւք եւ մեծապէս շքեղութեամբ դարձցի յիշխանութիւն կաթողիկոսութեան իւրոյ եւ յաշխարհ: *11* Եւ Սուրենայ բերեալ զպատգամն զարքայի առ երանելին Սահակ՝ խոստանայր նմա ըստ ասացածին[4] Վռամայ շքեղութիւն մեծ եւ աւգուտ գտանել ի թագաւորէն: *12* «Թէ հաւանեալ, ասէ, կամաց նորա, տացես վկայութիւն նախարարացն Հայոց՝ մեծարեալ բազում պատուովք դառնաս յիշխանութիւնդ. ապա եթէ այլազգագոյն ինչ խորհիս յամառեալ՝ եւ զքո կաթողիկոսական տունն կորուսանես ի քէն եւ յիշխանութենէդ զոր ունիս՝ մերժեալ լինիս. եւ ես վասն զի ազգակից քո եմ՝ եւ զբարին քո կամիմ, եւ ոչ թեթեւութեամբ[5] տամ քեզ այսպիսի սիրոյ խրատ»: *13* Եւ այսպիսի բանիւք ջանայր հաւանեցուցանել զսուրբ հայրապետն զՍահակ. քանզի կամէին բառնալ ի միջոյ զթագաւորութիւնն Հայոց:

14 Իսկ սուրբն եւ բնաւ իսկ յանձն ոչ առնոյր այսպիսի բանից՝ տալ վկայութիւն իշխանացն Հայոց. այլ հաստատեալ ի նոյն միտս՝ ասէր, եթէ «Ես զԱրտաշեսի զայդպիսի ինչ զվատթարութիւն ոչ գիտեմ, որով թէ արժան է ի ձէնջ դատելոյ եւ անարգանաց[6]. զի թէպէտ եւ ըստ սրբասէր մերոց աւրինաց

1 *Ճառ.* սոքա զնմանէ. սոքին իսկ
2 *Ատ.* լուարուք զնոցանէ
3 *Զ.* յայդպիսի
4 *ՁՏՏ.* ըստ ասածին. *այսպէս ըստ Ճառ.*
5 *Զ.* թեթեւութիւն
6 *ՁՏՏ. չիք* անարգանաց. *այսպէս ըստ Ճառ.*